ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

INTERNATIONAL LEGAL STANDARDS FOR THE PROTECTION OF THE RIGHT TO A FAIR TRIAL: A COMPARATIVE ANALYSIS

МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ СТАНДАРТЫ ЗАЩИТЫ ПРАВА НА СПРАВЕДЛИВОЕ СУДЕБНОЕ РАЗБИРАТЕЛЬСТВО: СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ

Անահիտ Աբրահամյան
Anahit Abrahamyan
Анаит Абраамян

Եվրասիա միջազգային համալսարան
Eurasia International University
Евразийский международный университет

anahit_abrahamyan24@alumni.aua.am

Ներկայացվել է՝ 07.04.2025; գրախոսվել է՝ 07.02.2026; ընդունվել է՝ 14.04.2026
Received: 07.04.2025; Revised: 07.02.2026; Accepted: 14.04.2026
Представлено: 07.04.2025; рецензировано: 07.02.2026; принято: 14.04.2026

© Հեղինակ, 2026: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2026. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2026. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-52

Ամփոփում – Հոդվածը վերլուծում է արդար դատաքննության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական չափորոշիչները՝ ուսումնասիրելով դրանց ձևավորման, կիրառման և զարգացման մեխանիզմները համընդհանուր և տարածաշրջանային մարդու իրավունքների համակարգերում: Չափորոշիչներն ընկալվում են որպես նորմատիվ և մեկնաբանական չափանիշների ամբողջություն, որոնք հստակեցնում են արդար դատաքննության երաշխիքների բովանդակությունը և սահմանները: Ուսումնասիրությունը հիմնվում է Միավորված ազգերի կազմակերպության Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի, ինչպես նաև ամերիկյան և աֆրիկյան տարածաշրջանային փաստաթղթերի համեմատական վերլուծության վրա: Աշխատությունը բացահայտում է համընդհանուր և տարածաշրջանային չափորոշիչների փոխլրացնող բնույթը, որտեղ Միավորված ազգերի կազմակերպության համակարգը սահմանում է նվազագույն պարտադիր շեմը, իսկ եվրոպական, միջամերիկյան և աֆրիկյան մեխանիզմները մշակում են մանրամասն կիրառելի նորմեր: Հատուկ ուշադրություն է դարձվում «կոշտ» և «փափուկ» իրավունքի փոխազդեցությանը, որը դարձել է ժամանակակից

միջազգային կարգավորման առանցքային բնութագիր: Ցույց է տրվում, որ փափուկ իրավունքի գործիքները՝ ընդհանուր մեկնաբանությունները, խորհրդատվական կարծիքները և միջազգային մարմինների փորձագիտական ուղեցույցները, առանցքային քվազի-նորմատիվ դեր են խաղում արդար դատաքննության չափորոշիչների առաջընթաց զարգացման գործընթացում: Ըստ ուսումնասիրության՝ տարածաշրջանային համակարգերի միջև առկա տարբերությունները հիմնականում ինստիտուցիոնալ բնույթ ունեն, այլ ոչ թե սկզբունքային նորմատիվ անհամաձայնություն են արտացոլում: Հոդվածը եզրակացնում է, որ չափորոշիչների արդյունավետությունը պայմանավորված է ճկունության և իրավական որոշակիության միջև հավասարակշռությամբ՝ ապահովելով միաժամանակ կանխատեսելիություն և տարբեր իրավական համակարգերում կիրառելիություն:

Abstract – The article analyses international legal standards for the protection of the right to a fair trial by examining the mechanisms of their formation, application, and development within universal and regional human rights systems. These standards are understood as a set of normative and interpretative criteria that clarify the content and limits of fair trial guarantees. The study draws on a comparative analysis of Article 14 of the International Covenant on Civil and Political Rights, Article 6 of the European Convention on Human Rights, and equivalent provisions in the Inter-American and African regional frameworks, highlighting both shared foundational values and divergences in normative elaboration and supervisory intensity. The study reveals the complementary nature of universal and regional standards, whereby the United Nations system establishes a minimum binding threshold, while the European, Inter-American, and African mechanisms develop detailed and practically applicable norms. Particular attention is paid to the interaction between hard law and soft law, which has become a defining feature of contemporary international regulation. Soft law instruments – including general comments, advisory opinions, and expert guidelines issued by international bodies – are shown to play a critical quasi-normative role in the progressive development of fair trial standards. The analysis further demonstrates that differences among regional systems are primarily institutional in character rather than reflecting substantive normative disagreement. The article concludes that the effectiveness of fair trial standards depends on maintaining a balance between flexibility and legal certainty, ensuring both predictability and applicability across diverse legal systems.

Аннотация – В статье анализируются международно-правовые стандарты защиты права на справедливое судебное разбирательство путем изучения механизмов их формирования, применения и развития в рамках универсальных и региональных систем защиты прав человека. Эти стандарты рассматриваются как совокупность нормативных и интерпретационных критериев, уточняющих содержание и пределы гарантий справедливого судебного разбирательства. Исследование основывается на сравнительном анализе статьи 14 Международного пакта о гражданских и политических правах, статьи 6 Европейской конвенции о защите прав человека, а также соответствующих положений межамериканских и африканских региональных документов. В работе раскрывается взаимодополняющий характер универсальных и региональных стандартов, при котором система ООН устанавливает минимальный обязательный порог, а европейские, межамериканские и африканские механизмы разрабатывают детализированные и практически применимые нормы. Особое внимание уделяется взаимодействию «жёсткого» и «мягкого» права, ставшему ключевой характеристикой современного международного регулирования. По-

казано, что инструменты мягкого права – общие комментарии, консультативные заключения и экспертные руководства, принимаемые международными органами, – выполняют ключевую квазинормативную функцию в прогрессивном развитии стандартов справедливого судопроизводства. Анализ также демонстрирует, что различия между региональными системами носят преимущественно институциональный характер и не отражают принципиального нормативного расхождения. В результате проведенного исследования можно заключить, что эффективность стандартов справедливого судебного разбирательства обусловлена соблюдением баланса между гибкостью и правовой определённостью, обеспечивающего одновременно их предсказуемость и применимость в различных правовых системах.

Հիմնաբառեր – դատաքննություն, իրավունք, օրենք, եզրակացություն, կոնվենցիա:
Keywords – trial, rights, law, conclusion, covenant.
Ключевые слова – разбирательство, право, закон, заключение, конвенция.

Ներածություն

Արդար դատաքննության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական չափորոշիչները պետք է ընկալել որպես համընդհանուր և տարածաշրջանային մարդու իրավունքների համակարգերում ձևավորված նորմատիվ և մեկնաբանական չափանիշների ամբողջություն, որոնք նպատակ ունեն հստակեցնել արդար դատաքննության երաշխիքների բովանդակությունը, ծավալը և սահմանները: Այդ չափորոշիչները ձևավորվում են պարտադիր ուժ ունեցող միջազգային պայմանագրային դրույթների, միջազգային դատարանների պրակտիկայի և ոլորտային հեղինակավոր մարմինների մեկնաբանությունների, ինչպես նաև վերջին շրջանում առավել ակտիվ կիրառվող «փափուկ իրավունքի» (soft law) գործիքների միջոցով, որոնք ուղղորդում և ձևավորում են իրավական նորմերի հայեցակարգերը: Միջազգային չափորոշիչների նպատակն է լրացնել միջազգային նորմատիվ պարտավորությունների և դրանց գործնական կիրառման միջև առաջացող բացերը՝ ուղղորդելով ինչպես դատական վերահսկողությունը, այնպես էլ պետությունների վարքագիծը:

Միջազգային չափորոշիչների ձևավորման կարևոր հատկանիշ է նաև դրանց գործառութային բնույթը: Ի տարբերություն դասական միջազգային պարտավորությունների, որոնք սահմանափակվում էին պետությունների միջև հարաբերություններով, արդար դատաքննության ոլորտում ձևավորված չափորոշիչները ուղղված են ներպետական իրավակարգերի վերափոխմանը: Պետությունները պարտավորվում են ոչ միայն ճանաչել տվյալ իրավունքը, այլև կառուցել այնպիսի համակարգ, որը կկարողանա գործնականում ապահովել դրա իրացումը: Այս առումով արդար դատաքննության իրավունքի միջազգային չափորոշիչներն ունեն ուղղակի ազդեցություն դատական բարեփոխումների, սահմանադրական քաղաքականության և իրավական համակարգերի արդիականացման վրա:

Նախ անհրաժեշտ է հստակ տարբերակել «իրավունք», «երաշխիք» և «չափորոշիչ» հասկացությունները, որոնք իրավաբանական գրականության մեջ

հաճախ օգտագործվում են որպես հոմանիշ՝ չնայած իրենց տարբեր իրավական նշանակությանը: Արդար դատաքննության իրավունքը, ինչպես այն ամրագրված է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածում և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում, անհատի օրենքով պաշտպանված սուբյեկտիվ իրավունքն է: Երաշխիքները վերաբերում են այն ինստիտուցիոնալ և ընթացակարգային մեխանիզմներին, որոնց միջոցով այդ իրավունքը իրագործվում է, որոնք են, օրինակ, դատական անկախությունը, դատարան դիմելու հնարավորությունը, կողմերի հավասարության սկզբունքը և այլն:

Միջազգային իրավական չափորոշիչները այն չափանիշներն են, որոնց միջոցով միջազգային մարմինները որոշում են՝ արդյոք տվյալ ազգային իրավական համակարգը և դատական պրակտիկան համապատասխանում են միջազգային իրավունքի սահմանած նվազագույն պահանջներին: Այս իմաստով չափորոշիչները հանդես են գալիս որպես իրավունքի և դրա երաշխիքների չափման գործիք:

Մարդու իրավունքների ոլորտի վաղ միջազգային փաստաթղթերում արդար դատաքննության իրավունքը ձևակերպված էր ընդհանրական տարբերակով: Ժամանակի ընթացքում, սակայն, միջազգային դատական և վերահսկող մարմինները, հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, զարգացրել են այդ դրույթները՝ վերածելով լայն ձևակերպումները կոնկրետ չափորոշիչների:

Արդար դատաքննության միջազգային չափորոշիչների համեմատական հարթությունն ունի ոչ պակաս կարևոր նշանակություն: Թեև համընդհանուր միջազգային փաստաթղթերը սահմանում են բոլոր պետությունների համար պարտադիր նվազագույն պահանջներ, տարածաշրջանային համակարգերը՝ իրավական ավանդույթներով, ինստիտուցիոնալ հնարավորություններով և պատմական փորձով պայմանավորված, ցուցաբերում են տարբեր մոտեցումներ:

Եվրոպական, միջամերիկյան և աֆրիկյան համակարգերից յուրաքանչյուրը ձևակերպում է արդար դատաքննության երաշխիքները իր ստանձնած միջազգային պարտավորությունների և դատական պրակտիկայի շրջանակներում, սակայն դրանք տարբերվում են այդ երաշխիքների հստակության, կիրառման ինտենսիվության և վերահսկողության մեխանիզմների առումով:

Սույն ուսումնասիրության հիմքում են միջազգային իրավական չափորոշիչների բովանդակությունն ու կառուցվածքը՝ ինչպես դրանք արտահայտված են պարտադիր և հեղինակավոր աղբյուրներում: Հետևաբար, ազգային իրավական համակարգերը սույն հոդվածում կդիտարկվեն ոչ թե որպես նորմերի ձևավորման աղբյուրներ, այլ որպես միջազգային չափորոշիչներով գնահատման օբյեկտներ և դրանց արտացոլում:

Այստեղ հատուկ ուշադրություն է դարձվում միջազգային դատարանների և վերահսկող մարմինների դերին արդար դատաքննության չափորոշիչների ձևավորման գործընթացում: Մարդու իրավունքները, այդ թվում՝ արդար դատա-

քննության իրավունքը, մշտապես զարգացող և ընդլայնվող նորմեր են պարունակում: ՄԻԵԴ-ը այս երևույթը ձևակերպել է հետևյալ կերպ. «(...) Կոնվենցիան կենդանի փաստաթուղթ է, որը, (...), պետք է մեկնաբանվի ժամանակակից պայմանների լույսի ներքո» (European Court of Human Rights):

Միևնույն ժամանակ, չափորոշիչների աճող բազմազանությունը առաջ է բերում իրավական որոշակիության և կանխատեսելիության խնդիրներ: Արդար դատաքննության երաշխիքների դինամիկ մեկնաբանությունը նպաստում է դրանց արդիականացմանը, սակայն կարող է նաև ստեղծել նորմատիվ անորոշություն և մեծացնել պետությունների վրա դրվող իրավական ներդաշնակեցման բեռը:

Ճկունության և իրավական որոշակիության միջև հավասարակշռությունը արդար դատաքննության իրավունքի հիմնական մարտահրավերներից է:

Վերջապես, հարկ է ընդգծել, որ այս ուսումնասիրության նպատակը արդար դատաքննության իրավունքի բաղադրիչների թվարկումը կամ դրանց կոնկրետ ներպետական կիրարկման գնահատումը չէ: Վերլուծության նպատակն է բացահայտել այն միջազգային նորմատիվ շրջանակը, որի ներսում գործում է արդար դատաքննության պաշտպանությունը՝ ուսումնասիրելով, թե ինչպես են ձևակերպվում, տարբերակվում և կիրառվում համապատասխան չափորոշիչները տարբեր իրավական համակարգերում:

Արդար դատաքննության իրավունքի համընդհանուր միջազգային իրավական չափորոշիչները

Արդար դատաքննության իրավունքի համընդհանուր միջազգային իրավական չափորոշիչները ձևավորվել են հիմնականում Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների համակարգի շրջանակներում: Ի տարբերություն տարածաշրջանային համակարգերի, որոնք գործում են համեմատաբար միատարր իրավական և ինստիտուցիոնալ միջավայրում, համընդհանուր չափորոշիչները ձևավորվում են իրավական ավանդույթների և քաղաքական համակարգերի լայն բազմազանության պայմաններում կիրառվելու միտումով: Հենց այդ հանգամանքով է պայմանավորված դրանց ավելի ընդհանրական ձևակերպումը: Այլ կերպ ասած՝ դրանք սահմանում են ոլորտային պարտավորությունների նվազագույն շեմը և չեն ծառայում որպես մանրամասն ընթացակարգային մոդելներ:

Արդար դատաքննության իրավունքի առաջնային ձևակերպումը տրվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի (Հռչակագիր) 10-րդ հոդվածում, որի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր իրավունքներն ու պարտականությունները ճշտելու և իրեն ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար լիակատար հավասարության հիմունքով իրավունք ունի այն բանի, որ իր գործը քննվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից հրապարակայնորեն և արդարության բոլոր պահանջների պահպանմամբ: Թեև Հռչակագիրը իրավաբանորեն պարտադիր ուժ չունի, դրա դրույթները ունեցել են զգալի նորմատիվ ազդեցություն՝ ծառայելով թե՛ որպես սովորու-

թային միջազգային իրավունքի աղբյուր, թե՛ որպես հետագա պայմանագրային կարգավորումների նախատիպ (Lauterpacht 1950, 61):

Հռչակագրի 10-րդ հոդվածում ամփոփված են ընթացակարգային արդարության հիմնարար արժեքները՝ արդարություն, հրապարակայնություն, անկախություն և անաչառություն, սակայն առանց դրանց իրավական հետևանքների մանրամասն բացահայտման:

Արդար դատաքննության իրավունքի հայեցակարգը ստացավ իրավաբանական պարտադիր ուժ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի միջոցով: Այս դրույթը հանդիսանում է արդար դատաքննության ամենալայն և համապարփակ պայմանագրային ձևակերպումներից մեկը՝ ներառելով ինչպես քրեական, այնպես էլ քաղաքացիական դատավարությունը և ապահովելով պաշտպանություն դատական գործընթացի տարբեր փուլերում: Միևնույն ժամանակ, նույնիսկ իր հարաբերական մանրամասնության պայմաններում 14-րդ հոդվածը շարունակում է մնալ շրջանակային նորմ, որը մեծապես մեկնաբանվում է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի դիրքորոշումներից:

Իր Ընդհանուր մեկնաբանությունների միջոցով (General Comment), մասնավորապես՝ Թիվ 13 և Թիվ 32 Ընդհանուր մեկնաբանություններով, Կոմիտեն հստակեցրել է արդար դատաքննության բովանդակությունը և սահմանները՝ Դաշնագրի շրջանակում (Human Rights Committee, General Comment N 32, 2007): Թիվ 32 Ընդհանուր մեկնաբանության 4-րդ հոդվածը հստակ արտացոլում է այն փաստը, որ միջազգային այս փաստաթղթերը և կառույցները սահմանում են իրավունքների պաշտպանության նվազագույն չափանիշները, որոնք պետք է հարգվեն պետությունների կողմից՝ անկախ իրենց իրավական մշակույթից և ինստիտուցիոնալ առանձնահատկություններից:

Թեև Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունները պարտադիր իրավական ուժ չեն կրում, դրանք, այնուամենայնիվ, ունեն բարձր հեղինակավոր արժեք և ընկալվում են որպես պետությունների պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ Կոմիտեի պաշտոնական դիրքորոշում:

Դաշնագրով ամրագրված չափորոշիչները նախևառաջ ներկայացնում են պարտադիր նվազագույն երաշխիքների համակարգ, այլ ոչ թե կատարյալ կամ միատեսակ դատավարական մոդել: Մարդու իրավունքների կոմիտեն հետևողականորեն ընդգծում է, որ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածը պարտավորեցնում է բոլոր պետություններին ապահովել արդար դատաքննության որոշակի նվազագույն չափանիշներ՝ անկախ դրանց իրավական համակարգի կառուցվածքից կամ առանձնահատկություններից: Թեև Դաշնագիրը ճանաչում է ազգային իրավական համակարգերի բազմազանությունը, այն միաժամանակ սահմանում է հստակ նորմատիվ եզրեր՝ կանխելով այդ բազմազանության հաշվին արդար դատաքննության էության ոտնահարումը: Հետևաբար, պետությունների հայեցողությունը դատական համակարգի կազմակերպման հարցում բացարձակ չէ

և պետք է իրականացվի միջազգային իրավունքով ամրագրված չափանիշների համապատասխան:

Հատկապես ուշագրավ է համընդհանուր և եվրոպական արդար դատաքննության չափորոշիչների հարաբերակցությունը: Թեև ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի հիման վրա ձևավորվել է առավել հարուստ և մանրամասն նախադեպային իրավունք, դրա հիմքում ընկած արժեքներն ու հիմնական հասկացությունները մեծապես համընկնում են Դաշնագրի 14-րդ հոդվածով ամրագրված մոտեցումներին: Միաժամանակ, եվրոպական համակարգը, իր նպատակով և կառուցվածքով պայմանավորված, չի սահմանափակվում նվազագույն չափանիշների ձևակերպմամբ: Այն օժտված է ավելի մեծ իրավական մանդատով, որը ներառում է իրավաբանական պարտադիր ուժ ունեցող մեկնաբանությունների ընդունումը:

Արդար դատաքննության պաշտպանության տարածաշրջանային համակարգերը

Համընդհանուր միջազգային փաստաթղթերը սահմանել են արդար դատաքննության հիմնական շրջանակները, սակայն տարածաշրջանային համակարգերն են դրանք վերածել մանրամասն և գործնական նորմերի: Տարածաշրջանային մեխանիզմները գործում են սահմանափակ աշխարհագրական միջավայրում, որը հնարավորություն է տալիս ապահովելու ավելի մեծ հստակություն և արդյունավետ դատական վերահսկողություն: Հենց այս համակարգերում է իրականացվել արդար դատաքննության միջազգային չափորոշիչների ամենաարդյունավետ մշակումը:

Եվրոպական համակարգը առանձնանում է իր նախադեպային իրավունքի ծավալով և բարդությամբ: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը սահմանում է արդար դատաքննության երաշխիքներ քաղաքացիական և քրեական վարույթների համար: Թեև հոդվածի տեքստը նման է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածին, դրա իրական բովանդակությունը ձևավորվել է ՄԻԵԴ-ի դատական պրակտիկայի միջոցով:

Ինչպես արդեն նշեցինք, Եվրոպական մոտեցման հիմնական առանձնահատկությունը Կոնվենցիայի դինամիկ մեկնաբանությունն է՝ այն դիտարկելով որպես «կենդանի գործիք»: Այս մոտեցումը Դատարանին թույլ է տվել արդար դատաքննության չափորոշիչները մեկնաբանել և կիրառել ավելի ճկուն եղանակով՝ առանց Կոնվենցիայի տեքստը փոխելու: Հետևաբար ձևավորվել է համակարգ, որը թույլ է տալիս հաջողությամբ արձագանքել տարբեր երկրներում ի հայտ եկող խնդիրներին:

Եվրոպական համակարգի մեկ այլ կարևոր հատկանիշ է դրա չափորոշիչների պարտադիր բնույթը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները պարտադիր են ՄԻԵԿ-ի անդամ հանդիսացող պետությունների համար, իսկ դրանց կատարումը վերահսկում է Նախարարների կոմիտեն: Այս կառուցվածքը բարձրացնում է եվրոպական չափորոշիչների իրական ազդե-

ցությունը: Շնորհիվ դրա՝ 6-րդ հոդվածի նախադեպային իրավունքն ստացել է լայն կիրարկում և՛ միջազգային, և՛ ներպետական իրավական հարթություններում:

Միջամերիկյան համակարգը գործում է Մարդու իրավունքների պաշտպանության Ամերիկյան կոնվենցիայի հիման վրա (American Convention on Human Rights, art. 8): Արդար դատաքննության իրավունքը սահմանված է կոնվենցիայի 8-րդ հոդվածով և ներառում է այն բոլոր տարրերը, որոնք առկա են եվրոպական համակարգում: Միաժամանակ կարելի է ասել, որ այն որոշ առումներով ավելի մանրամասն է: Օրինակ՝ կոնվենցիայի 5-րդ հոդվածի 2-րդ կետը արգելում է խոշտանգումը, ինչպես նաև դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը: Նշված դրույթը ներառում է հատուկ երաշխիք, ըստ որի՝ *ազատությունից զրկված բոլոր անձինք պետք է ենթարկվեն այնպիսի վերաբերմունքի, որը հարգում է անձի արժանապատվությունը*: Այն դեպքերում, երբ ազատությունից զրկված անձանց մարդու իրավունքների վիճակը գնահատվել է որպես առանձնապես մտահոգիչ, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարել պահանջել ազատությունից զրկված բոլոր անձանց վերաբերյալ կենտրոնացված գրանցամատյանի ստեղծում՝ անկախ ազատությունից զրկման հիմքերից կամ դրա համար պատասխանատու մարմնից:

Այս գրանցամատյանը պետք է կալանավորումից հետո՝ 24 ժամվա ընթացքում, գրանցի կալանավորվածի անունը, ինքնությունը և այն մարմինը, որի իրավասության ներքո է պահվում կալանավորվածը: Այս գրանցամատյանում պահվող տեղեկատվությունը պետք է անհապաղ տրամադրվի այն պահանջող դատական մարմիններին, այդ թվում՝ հանրային պաշտպաններին և մարդու իրավունքների կազմակերպություններին (Inter-American Commission on Human Rights 1993, 60):

Միջամերիկյան դատարանի մոտեցումը բնութագրվում է սոցիալական անհավասարության նկատմամբ զգայունությամբ՝ արտացոլելով տարածաշրջանի բազմաթիվ երկրների համատեքստը:

Մարդու իրավունքների պաշտպանության աֆրիկյան համակարգը ներկայացնում է տարածաշրջանային չափորոշիչների ձևավորման ևս մեկ օրինակ: Արդար դատաքննության իրավունքը սահմանված է Մարդու և ժողովուրդների իրավունքների մասին Աֆրիկյան խարտիայի 7-րդ հոդվածով (Organization of African Unity): Աֆրիկյան համակարգում արդար դատաքննության չափորոշիչների զարգացումը սահմանափակված է պրակտիկ ինստիտուցիոնալ խնդիրներով: Այնուամենայնիվ, աֆրիկյան շրջանակը կարևոր դեր է խաղում՝ ընդգծելով արդար դատաքննության իրավունքի համընդհանուր բնույթը:

Տարածաշրջանային համակարգերում առկա են թե՛ նմանություններ, թե՛ տարբերություններ: Երեք համակարգերում էլ ընդգծվում է դատական անկախության, կողմերի հավասարության և ընթացակարգային արդարության հիմնարար նշանակությունը: Այս ընդհանուր մոտեցումները վկայում են մարդու իրավունքների համընդհանուր նորմերի ազդեցության մասին: Միաժամանակ,

այդ սկզբունքների կիրառման մեխանիզմները զգալիորեն տարբերվում են՝ կախված ինստիտուցիոնալ կառուցվածքից և տարածաշրջանային համատեքստից:

Արդար դատաքննության իրավունքի պաշտպանության մեջ «կոշտ իրավունքի» և «փափուկ իրավունքի» չափորոշիչները

Արդար դատաքննության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական չափորոշիչները ձևավորվում են ոչ միայն պարտադիր իրավաբանական ուժ ունեցող պայմանագրային նորմերի հիման վրա, այլև ոչ պարտադիր, այնպիսի գործիքների միջոցով, որոնք ուղղորդում են պարտադիր նորմերի մեկնաբանությունն ու կիրառումը: Կոշտ և փափուկ իրավունքի փոխազդեցությունը դարձել է ժամանակակից մարդու իրավունքների միջազգային պաշտպանության բնորոշ գիծ, հատկապես՝ ընթացակարգային արդարության ոլորտում:

Կոշտ իրավունքի չափորոշիչները հիմնականում ամրագրված են միջազգային պայմանագրերով և պարտադիր են դրանց կողմ հանդիսացող պետությունների և միջազգային կազմակերպությունների համար:

Արդար դատաքննության պաշտպանության համատեքստում այդպիսի չափորոշիչներ նախատեսված են, մասնավորապես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրում, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայում և մարդու իրավունքների տարածաշրջանային այլ պայմանագրերում: Այս փաստաթղթերը ձևավորում են արդար դատաքննության երաշխիքների նորմատիվ հիմքը՝ սահմանելով պետությունների պարտավորությունների ծավալը և դրանց իրականացման վերահսկող մեխանիզմները և միջազգային դատական մարմինների իրավասությունը: Դրանց պարտադիր բնույթը ապահովում է իրավական որոշակիություն և հաշվետվողականություն՝ ստեղծելով ներքին դատական համակարգերի նկատմամբ միջազգային վերահսկողության հստակ իրավական հիմքեր:

Այնուամենայնիվ, միայն պայմանագրային դրույթները բավարար չեն արդիական իրավական համակարգերում հանդիպող բազմազան և բարդ ընթացակարգային իրողությունները կարգավորելու համար: Այդ պատճառով կոշտ իրավունքի նորմերի մեկնաբանությունը հընթացս ավելի է ապավինում լրացուցիչ աղբյուրների, որոնք չունեն պարտադիր ուժ, սակայն օժտված են զգալի ազդեցությամբ: Այդպիսի փափուկ իրավունքի գործիքների շարքին են դասվում մեկնաբանությունները, ուղեցույցները, սկզբունքները, առաջարկությունները և կարծիքները, որոնք ընդունվում են միջազգային մարմինների կողմից: Թեև դրանք իրավաբանորեն պարտադիր չեն, դրանց դերը վճռորոշ է պայմանագրային պարտավորությունների շրջանակի հստակեցման և փոփոխվող իրավական մարտահրավերներին արձագանքող չափորոշիչների ձևավորման գործում:

ՄԱԿ-ի համակարգում փափուկ իրավունքը առանցքային նշանակություն է ունեցել արդար դատաքննության համընդհանուր չափորոշիչների զարգացման մեջ: Ինչպես նշեցինք ավելի վաղ, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի Ընդհանուր մեկնաբանությունները ապահովում են Քաղաքացիական և քաղաքա-

կան իրավունքների միջազգային դաշնագրի դրույթների մեկնաբանությունը: Այս մեկնաբանական փաստաթղթերը գործառութորեն վերածվում են քվազի-նորմատիվ չափորոշիչների՝ ուղղորդելով պետություններին իրենց պայմանագրային պարտավորությունների իրականացման ընթացքում: Թեև պետությունները պարտավոր չեն ենթարկվել Ընդհանուր մեկնաբանություններին, դրանց հետևողական կիրառումը վերահսկողական պրակտիկայում և միջազգային իրավական հարթակում ունեցել է էական ազդեցություն:

Եվրոպայի խորհրդի համակարգը ներկայացնում է կոշտ և փափուկ իրավունքի նորմատիվ փոխազդեցության առավել զարգացած օրինակներից մեկը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պարտադիր նախադեպային իրավունքի հետ մեկտեղ արդար դատաքննության չափորոշիչների ձևավորմանը մասնակցում են մի շարք մասնագիտական մարմիններ՝ ոչ պարտադիր փաստաթղթերի միջոցով: Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (CCJE) ընդունել է բազմաթիվ կարծիքներ՝ դատական անկախության, էթիկայի, արդյունավետության և արդարադատության որակի վերաբերյալ: Նմանապես, Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովը (CEPEJ) մշակել է ուղեցույցներ և գնահատման գործիքներ, որոնք նպատակ ունեն բարելավելու դատական համակարգերի գործառույթը և ապահովելու արդարադատության արդյունավետ հասանելիությունը:

Այս փափուկ իրավունքի գործիքները չեն գործում մեկուսացված ձևով: Ընդհակառակը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաճախ հղում է կատարում դրանց՝ որպես մեկնաբանական օժանդակող միջոցների: Այս դինամիկան ցույց է տալիս, թե ինչպես կարող են պարտադիր իրավաբանական ուժ չունեցող միջազգային գործիքները ձևավորել պարտադիր միջազգային նորմերը (Hennebel, Tigroudja 2025, 92–110):

Փափուկ իրավունքի նորմատիվ արժեքը արդար դատաքննության պաշտպանության համատեքստում պայմանավորված է դրա ճկունությամբ և հարմարվողականությամբ: Ի տարբերություն պայմանագրային նորմերի, որոնք դժվար է փոփոխել, փափուկ իրավունքի գործիքները կարող են արագորեն վերանայվել և կատարելագործվել՝ ի պատասխան նոր առաջացող խնդիրների: Այս ճկունությունը թույլ է տալիս միջազգային մարմիններին անդրադառնալ տեխնիկական և ընթացակարգային հարցերի, որոնք անիրատեսական կլիներ կարգավորել պաշտոնական պայմանագրային գործընթացի միջոցով:

Միևնույն ժամանակ, փափուկ իրավունքի աճող կիրառումը առաջ է բերում իրավական որոշակիության և ժողովրդավարական լեգիտիմության վերաբերյալ մտահոգություններ: Պարտադիր ուժի և վավերացման ընթացակարգերի բացակայությունը կարող է անորոշ դարձնել փափուկ իրավունքի նորմատիվ կարգավիճակը: Քննադատների կարծիքով՝ փափուկ իրավունքի լայն կիրառումը կարող է վտանգել միջազգային իրավունքի հիմքում ընկած համաձայնության սկզբունքը, հատկապես այն դեպքերում, երբ այդ գործիքները փաստացի պարտադիր ազդեցություն են ունենում պետությունների վրա (Goldmann 2012, 335–

368): Այս խնդիրները հատկապես զգայուն են արդար դատաքննության ոլորտում, քանի որ ընթացակարգային չափորոշիչները անմիջականորեն ազդում են ներքին դատական համակարգերի կազմակերպման և գործառույթի վրա:

Այնուամենայնիվ, միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ կոշտ և փափուկ իրավունքը առավել նպատակահարմար է ընկալել որպես փոխլրացնող, այլ ոչ թե մրցակցող աղբյուրներ: Կոշտ իրավունքը ապահովում է նորմատիվ հենասյունը՝ սահմանելով հիմնարար պարտավորությունները և կիրառման մեխանիզմները: Փափուկ իրավունքը, իր հերթին, տրամադրում է մանրամասներ և տեխնիկական ուղեցույցներ, որոնք անհրաժեշտ են այդ պարտավորությունների իրագործման համար:

Համեմատական տեսանկյունից եվրոպական համակարգը կրկին առանձնանում է նրանով, թե որքան ինստիտուցիոնալացված է փափուկ իրավունքի դերը չափորոշիչների ձևավորման գործընթացում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, CCJE-ի և CEPEJ-ի միջև համակարգված փոխգործակցությունը ցույց է տալիս, թե ինչպես կարող են պարտադիր դատական վերահսկողությունը և փորձագիտական ուղեցույցները փոխադարձաբար ուժեղացնել միմյանց:

Այսպիսով, արդար դատաքննության իրավունքի միջազգային պաշտպանությունը հնարավոր չէ լիարժեք հասկանալ միայն պայմանագրային իրավունքի շրջանակում: Արդար դատաքննության չափորոշիչների զարգացումը պարտադիր իրավական նորմերի և ոչ պարտադիր մեկնաբանական ուղեցույցների միջև շարունակական նորմատիվ երկխոսության արդյունք է: Կոշտ իրավունքը ձևավորում է իրավական հիմքը, մինչդեռ փափուկ իրավունքը այն հստակեցնում և լրացնում է՝ արձագանքելով գործնական և հայեցակարգային մարտահրավերներին: Այս աղբյուրների դերի և փոխհարաբերության ըմբռնումը անհրաժեշտ պայման է արդար դատաքննության միջազգային չափորոշիչների ամբողջական վերլուծության և մարդու իրավունքների ժամանակակից համատեքստում դրանց զարգացման տրամաբանության ընկալման համար:

Արդար դատաքննության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական չափորոշիչների նմանություններն ու տարբերությունները

Արդար դատաքննության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական չափորոշիչների համեմատական ուսումնասիրությունը բացահայտում է բարդ և բազմաշերտ պատկեր, որը բնութագրվում է միաժամանակ թե՛ էական նմանություններով, թե՛ դրանց ձևակերպման և կիրառման ոլորտում առկա տարբերություններով: Թեև համընդհանուր և տարածաշրջանային մարդու իրավունքների համակարգերն ընդհանուր առմամբ համակարծիք են ընթացակարգային արդարության հիմնարար նշանակության հարցում, դրանք զգալիորեն տարբերվում են այն հստակությամբ, արդյունավետությամբ և մեթոդաբանական մոտեցումներով, որոնց միջոցով արդար դատաքննության չափորոշիչները որոշակիացվում և գործադրվում են: Այս նմանություններն ու տարբերություն-

ները զուտ տեխնիկական բնույթ չեն կրում: Դրանք արտացոլում են միջազգային իրավական համակարգերի միջև առկա ինստիտուցիոնալ, մշակութային և գաղափարախոսական առանձնահատկությունները:

Նմանությունների մակարդակում մարդու իրավունքների միջազգային բոլոր հիմնական համակարգերը արդար դատաքննության իրավունքը ճանաչում են որպես իրավունքի գերակայության հիմնարար բաղադրիչ: Համընդհանուր և տարածաշրջանային փաստաթղթերը հետևողականորեն ամրագրում են այնպիսի առանցքային սկզբունքներ, ինչպիսիք են դատարանների առաջ հավասարությունը, անկախ և անաչառ դատարանի հասանելիությունը, ընթացակարգային արդարության ապահովումը: Այս ընդհանրությունը վկայում է ժամանակակից մարդու իրավունքների միասնական մտավոր և նորմատիվ հիմքի մասին, որը ձևավորվել է հետպատերազմյան շրջանում՝ իրավաչափության, արդար դատավարության և պետական կամայականությունից անհատի պաշտպանության գաղափարների շուրջ: Տարբեր միջազգային փաստաթղթերում նմանատիպ ձևակերպումների կրկնությունը պատահական չէ, այլ արտահայտում է ընթացակարգային արդարության այն նվազագույն բովանդակությունը, որն այսօր լայնորեն ընդունված է որպես միջազգային իրավական պարտավորություն (Hirvelä, Heikkilä 2021):

Նմանությունները դրսևորվում են նաև արդարության գործառութային ընկալման մեջ, որը որդեգրել են միջազգային վերահսկող և դատական մարմինները: Արդար դատաքննության իրավունքը չափվում է առկա նորմատիվ և ինստիտուցիոնալ երաշխիքների ամբողջության հիման վրա և ոչ թե ձևական կարգավորումների առկայությամբ (Shelton 2013):

Միևնույն ժամանակ, այս ընդհանուր նորմատիվ հիմքի շրջանակում ակնհայտ են արդար դատաքննության չափորոշիչների մշակման և կիրառման ոլորտում առկա տարբերությունները: Տարբերակման առավել տեսանելի ուղղություններից մեկը նորմատիվ մանրամասնության աստիճանն է: Եվրոպական համակարգը, ՄԻԵԴ-ի լայնածավալ նախադեպային իրավունքի շնորհիվ, ձևավորել է մանրամասն չափորոշիչների համակարգ, որը կարգավորում է ընթացակարգային իրավիճակների լայն շրջանակ: Դրան հակառակ՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի շրջանակում ձևավորված համընդհանուր չափորոշիչները, թեև ունեն բարձր հեղինակություն, գործում են ավելի ընդհանրական մակարդակում: Այս տարբերությունը սերտորեն պայմանավորված է ինստիտուցիոնալ գործոններով: Մշտական միջազգային դատարանի առկայությունը ստեղծում է հայեցակարգային խորացման և հետևողական հստակեցման այնպիսի հնարավորություններ, որոնք կառուցվածքային առումով անհասանելի են վերահսկողական, սակայն դատական լիազորություններով չօժտված մարմինների համար:

Տարբերությունները դրսևորվում են նաև դատական վերահսկողության ինտենսիվության հարցում: Տարածաշրջանային դատարանները, հատկապես ՄԻԵԴ-ը, կիրառում են խոր և մանրակրկիտ վերահսկողություն ազգային դա-

տական գործընթացների նկատմամբ՝ գնահատելով ոչ միայն ընթացակարգային վարքագիծը, այլև դատական համակարգերի ինստիտուցիոնալ կառուցվածքը: Իսկ համընդհանուր մեխանիզմները հակված են առավել զուսպ մոտեցման՝ կենտրոնանալով նվազագույն երաշխիքների ապահովման վրա և պետություններին տրամադրելով ավելի լայն հայեցողություն:

Եզրափակելով՝ արդար դատաքննության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական չափորոշիչները բնութագրվում են հիմնարար ընթացակարգային արժեքների շուրջ ձևավորված էական նմանություններով և դրանց մշակման, կիրառման ու գործադրման ոլորտներում առկա տարբերություններով: Այս տարբերությունները հիմնականում պայմանավորված են ինստիտուցիոնալ և կառուցվածքային գործոններով, այլ ոչ թե նորմատիվ սկզբունքային անհամաձայնությամբ: Նմանությունների և տարբերությունների համեմատական ըմբռնումը հնարավորություն է տալիս բացահայտելու միջազգային արդար դատաքննության չափորոշիչների ուժեղ և սահմանափակ կողմերը և ապահովում է անհրաժեշտ վերլուծական հիմք՝ այդ համակարգի համահունչությունն ու արդյունավետությունն ամբողջականորեն գնահատելու համար:

Միջազգային արդար դատաքննության չափորոշիչների կիրառելիությունը, իրավական որոշակիությունն ու կանխատեսելիությունը

Արդար դատաքննության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական չափորոշիչների արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն դրանց նորմատիվ բովանդակությամբ, այլև կիրառելիությամբ, հստակությամբ և կանխատեսելիությամբ: Չափազանց վերացական կամ անհետևողականորեն կիրառվող չափորոշիչները կարող են խաթարել իրավական որոշակիությունը, մինչդեռ չափից ավելի կոշտ մոտեցումները հաճախ անկարող են հաշվի առնել իրավական համակարգերի և դատավարական ավանդույթների բազմազանությունը: Այդպիսով, ճկունության և կանխատեսելիության միջև հավասարակշռությունը արդար դատաքննության միջազգային կարգավորման հիմնարար մարտահրավերներից մեկն է:

Միջազգային հարթությունում կիրառելիությունը նախևառաջ վերաբերում է այն հանգամանքին, թե արդյոք արդար դատաքննության չափորոշիչները կարող են օգտակար լինել պետությունների վարքագիծը գնահատելու համար: Ի տարբերություն ներքին իրավական նորմերի՝ միջազգային չափորոշիչները ներառված չեն մեկ միասնական իրավակարգում, այլ կիրառվում են տարբեր պետություններում՝ բազմազան ինստիտուցիոնալ կառուցվածքներով, ընթացակարգային կանոններով և իրավական մշակույթներով: Այս կառուցվածքային առանձնահատկությունը պահանջում է չափորոշիչների որոշակի աստիճանի վերացականություն, որպեսզի ապահովեն դրանց արդիականությունը տարբեր համակարգերում: Ավելին, գործնականում կիրառելի լինելու համար չափորոշիչները պետք է լինեն բավականաչափ ուղղորդող՝ հնարավորություն տալով

ինչպես միջազգային մարմիններին, այնպես էլ պետություններին գնահատելու դրանց կիրարկման արդյունավետությունը:

Կիրառելիության խնդիրը սերտորեն առնչվում է իրավական որոշակիության սկզբունքին, որը ենթադրում է, որ իրավական նորմերը պետք է լինեն հասանելի, կանխատեսելի և բավարար չափով հստակ: Արդար դատաքննության պաշտպանության համատեքստում իրավական որոշակիությունը ծառայում է ինչպես անհատական, այնպես էլ համակարգային շահերին: Անհատների տեսանկյունից այն ապահովում է, որ ընթացակարգային իրավունքները չլինեն կամայական: Պետությունների համար այն հնարավորություն է տալիս կազմակերպելու դատական համակարգերը միջազգային պարտավորություններին համապատասխան: Հետևաբար, միջազգային արդար դատաքննության չափորոշիչները պետք է հավասարակշռեն ընդհանրականությունը և հստակությունը՝ տրամադրելով բավարար ուղեցույց՝ առանց ընթացակարգային հատուկ մոդելների պարտադրման:

Այս հավասարակշռության միտումը հատկապես ակնհայտ է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքում, որտեղ չափորոշիչների ձևավորումը իրականացվում է փուլային տարբերակով: Կոնվենցիան դիտարկելով որպես «կենդանի գործիք»՝ Դատարանը հնարավորություն է ստեղծել արդար դատաքննության չափորոշիչները հարմարեցնելու փոփոխվող սոցիալական պայմաններին: ՄԻԵԴ-ը չի իրականացնում կտրուկ հայեցակարգային շրջադարձեր, այլ հետևողականորեն հղկում է իր դիրքորոշումները՝ հնարավորություն տալով պետություններին ժամանակի ընթացքում շտկելու իրենց ներպետական իրավական համակարգերը: Այս աստիճանական զարգացումը նպաստում է իրավական որոշակիությանը՝ նոր մեկնաբանությունները ներդնելով արդեն գոյություն ունեցող նախադեպային շրջանակի մեջ:

Կանխատեսելիության հարցը սերտորեն կապված է նաև այն հայեցողության սահմանների հետ, որոնք միջազգային մարմինները տրամադրում են պետություններին արդար դատաքննության ոլորտում: Ընդհանուր առմամբ, ընդունված է, որ ազգային իշխանությունները հաճախ ավելի լավ են տեղյակ իրենց դատական համակարգերի գործառնական պահանջներից: Այդ պատճառով պետություններին տրամադրվում է որոշակի ազատություն արդար դատաքննության երաշխիքների իրականացման ձևերի ընտրության հարցում: Այս ճկունությունը բարձրացնում է չափորոշիչների կիրառելիությունը՝ հարմարեցնելով դրանք իրավական համակարգերի անհատական պահանջներին, սակայն միևնույն ժամանակ հանգեցնում է իրավունքների կիրարկման որոշակի անկայունության:

Իրավական որոշակիության հարցը բարդանում է նաև կոշտ և փափուկ իրավունքի փոխազդեցության պայմաններում: Փափուկ իրավունքի գործիքները կարևոր դեր են խաղում պայմանագրային պարտավորությունների հստակեցման և լրացման գործում, սակայն դրանց ոչ պարտադիր բնույթը հարցեր է առաջացնում նորմատիվ կարգավիճակի վերաբերյալ: Թեև այդպիսի գործիքները կարող են բարձրացնել կանխատեսելիությունը՝ տրամադրելով մեկնաբանական

ուղղորդում, դրանց իրավական ուժը միշտ չէ, որ հստակ է, հատկապես այն դեպքերում, երբ դրանք ձևավորում են ակնկալիքներ, որոնք դուրս են գալիս պայմանագրային տեքստի բառացի սահմաններից: Այս անորոշությունը կարող է դժվարություններ ստեղծել պետությունների համար միջազգային արդար դատաքննության չափորոշիչներին համապատասխանելու գործընթացում, հատկապես՝ միատեսակ դատական հաստատման բացակայության պայմաններում:

Վերջիվերջո, ճկունության և կանխատեսելիության միջև լարվածությունը բնորոշ է ընթացակարգային իրավունքների միջազգային պաշտպանությանը: Չափից ավելի կոշտ մոտեցումը կարող է խաթարել արդար դատաքննության չափորոշիչների հարմարվողականությունը, մինչդեռ չափազանց անորոշ կարգավորումները կարող են նվազեցնել դրանց իրավական հեղինակությունը: Միջազգային մարմինները ձգտում են հաղթահարել այս լարվածությունը՝ մշակելով այնպիսի չափորոշիչներ, որոնք միաժամանակ բավարար չափով հստակ են վարքագիծը ուղղորդելու համար և բավականաչափ ճկուն՝ իրավական միջավայրի փոփոխություններին արձագանքելու համար:

Եզրակացություններ

Սույն վերլուծությունը ցույց է տալիս, որ արդար դատաքննության իրավունքի միջազգային պաշտպանությունը ձևավորվում է բազմաշերտ նորմատիվ համակարգի շրջանակում, որտեղ համընդհանուր և տարածաշրջանային չափորոշիչները գործում են ոչ թե մեկուսացված, այլ փոխլրացնող տրամաբանությամբ: Համընդհանուր համակարգը սահմանում է նվազագույն պարտադիր շեմը, իսկ տարածաշրջանային մեխանիզմները, հատկապես եվրոպականը, այդ շեմը վերածում են գործնականում կիրառելի և մանրամասն չափորոշիչների: Այս փոխհարաբերությունը վկայում է ոչ թե նորմատիվ տարաձայնության, այլ իրավական կարգավորման տարբեր մակարդակների և գործառույթների գոյության մասին:

Արդար դատաքննության չափորոշիչների զարգացումը հնարավոր չէ ընկալել բացառապես պայմանագրային իրավունքի շրջանակում: Կոշտ և փափուկ իրավունքի փոխազդեցությունը դարձել է ընթացակարգային արդարության միջազգային կարգավորման առանցքային բնութագիր: Պայմանագրային նորմերը ապահովում են իրավական պարտավորությունների հիմքը և վերահսկողության մեխանիզմները, մինչդեռ փափուկ իրավունքի գործիքները նպաստում են դրանց բովանդակային հստակեցմանը, տեխնիկական խորացմանը և ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն:

Միաժամանակ, համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ միջազգային համակարգերի միջև առկա տարբերությունները հիմնականում պայմանավորված են ինստիտուցիոնալ կառուցվածքով և վերահսկողության մեխանիզմների բնույթով: Մշտական միջազգային դատարանների առկայությունը թույլ է տալիս ձևավորել ավելի առարկայական չափորոշիչներ, մինչդեռ համընդհանուր վերահսկողական մարմինները գործում են առավել զուսպ և ընդհանրական շրջանակում՝ պահպանելով պետությունների լայն հայեցողությունը:

Վերջապես, սույն վերլուծության առանցքային եզրահանգումն այն է, որ արդար դատաքննության միջազգային չափորոշիչների արդյունավետությունը կախված է ճկունության և իրավական որոշակիության միջև պահպանվող հավասարակշռությունից: Չափորոշիչները պետք է լինեն բավարար չափով հստակ՝ վարքագիծը ուղղորդելու և իրավական կանխատեսելիություն ապահովելու համար, սակայն նաև բավականաչափ ճկուն՝ տարբեր իրավական համակարգերում կիրառելի մնալու և զարգացող սոցիալական պայմաններին արձագանքելու նպատակով: Այս հավասարակշռության պահպանումն է, որ պայմանավորում է արդար դատաքննության իրավունքի միջազգային պաշտպանության կենսունակությունն ու նորմատիվ հեղինակությունը:

Շնորհակալական

Սույն հոդվածի թեմայի ընտրության, շոշափվող առանցքային հարցերի վերաբերյալ կարևոր խորհուրդների և դիտարկումների համար երախտագիտությունս եմ հայտնում իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Աշոտ Հայրապետյանին:

Գրականություն/References/Литература

1. European Court of Human Rights. Case of Tyrer v. the United Kingdom, no. 5856/72, Judgment of 25 April 1978.
2. Goldmann M. 2012, We Need to Cut Off the Head of the King: Past, Present, and Future Approaches to International Soft Law, Leiden Journal of International Law 25, N 2, 335–368.
3. Hennebel L., Tigroudja H. 2025, The Place of Soft Law Standards in International Human Rights Law, In International Human Rights Law: A Treatise, Cambridge, Cambridge University Press, 92–110.
4. Hirvelä P., Heikkilä S. 2021, Right to a Fair Trial: A Practical Guide to the Article 6 Case-Law of the European Court of Human Rights, Cambridge, Intersentia.
5. Inter-American Commission on Human Rights 1993, Report on the Situation of Human Rights in Peru, OEA/Ser, L/V/II. 83, Doc. 31.
6. Lauterpacht H. 1950, International Law and Human Rights, New York, Frederick A. Praeger.
7. Organization of African Unity. African Charter on Human and Peoples' Rights, Adopted 27 June 1981, entered into force 21 October 1986.
8. Organization of American States. American Convention on Human Rights (Pact of San José, Costa Rica), Adopted 22 November 1969, entered into force 18 July 1978.
9. Shelton D. 2013, Regional Protection of Human Rights, Oxford, Oxford University Press.
10. United Nations Human Rights Committee. General Comment No. 32: Article 14 – Right to Equality before Courts and Tribunals and to a Fair Trial, CCPR/C/GC/32 (23 August 2007).